01/10.1/17351-16 2016-11-08
AJV-44-01 2016-11-03

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Ջարուհի Փոստանջյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Գաղտնազերծման (լյուստրացիայի) մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Ազգային անվտանգության մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (*Պ-1088-07.10.2016-ՊԻ-010/0* և *Պ-1088$^{1-6}$-07.10.2016-ՊԻ-010/0*) վերաբերյալ:

«Գաղտնազերծման (լյուստրացիայի) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) առաջարկվում է իրավական սահմանում տալ

լյուստրացիային՝ ամրագրելով այդ գործընթացի հաջորդականությունը, ինչպես նաև ստեղծել միջգերատեսչական հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով) հատուկ ծառայությունների հետ գաղտնի համագործակցած անձանց գործունեության բացահայտման, գնահատման, վերջիններիս՝ օրենքով սահմանված պաշտոններ զբաղեցնելը կանխելու և սահմանափակելու նպատակով: Նախագծով սահմանվել է հանձնաժողովի պարտականությունը՝ գաղտնազերծման ենթակա պաշտոններ զբաղեցնող կամ դրանց հավակնող՝ բացահայտված անձանց առաջարկել ինքնակամ (կամավոր) հրաժարվել զբաղեցրած պաշտոնից կամ դրան հավակնելուց, ինչպես նաև որոշում կայացնել՝ գաղտնազերծելու և հրապարակելու նշված անձանց մասին տեղեկատվությունը, եթե մերժվում է հանձաժողովի՝ նշված առաջարկությունը, ինչպես նաև տվյալ անձի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել համապատասխան մարմնին՝ պաշտոնանկության, թեկնածության գրանցումը չեղյալ ճանաչելու առաջարկով: Միևնույն ժամանակ նախագծին կից ներկայացված՝ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով առաջարկվում է իբրև ինքնուրույն հանցակազմ նախատեսել գաղտնազերծման ենթակա պաշտոններ զբաղեցնող կամ դրանց հավակնող՝ բացահայտված անձանց կողմից զբաղեցրած պաշտոնից ինքնակամ (կամավոր) հրաժարվելու կամ դրան հավակնելուց հրաժարվելու առաջարկը մերժելը:

Նշված կարգավորումն առերևույթ հակասում է արդար դատաքննության հիմնարար իրավունքին՝ երաշխավորված Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և միջազգային իրավական ակտերով: Նշվածը հիմնավորվում է նրանով, որ հանձնաժողովի կողմից իրականացվող գաղտնազերծման արդյունքում անձը կարող է քրեական պատասխանատվության ենթարկվել սոսկ զբաղեցրած պաշտոնից ինքնակամ (կամավոր) հրաժարվելու կամ դրան հավակնելուց հրաժարվելու առաջարկը մերժելու համար: Մինչդեռ հանցագործության մեջ մեղադրվող յուրաքանչյուր անձի համար պետք է երաշխավորվի արդար դատաքննության իրավունքը, դրա բաղկացուցիչ մասը կազմող անմեղության կանխավարկածի սկզբունքը, իսկ հանձնաժողովի գործունեությունը

նախագծով տրված կարգավորումների համատեքստում նշված պահանջներին չի համապատասխանում: Մասնավորապես, երաշխավորված չեն անձի՝ դատարանի առջև կանգնելու և լսված լինելու, հրապարակային դատաքննության, մրցակցության հիմնարար պահանջները:

Այսպիսով, նախագծով առաջարկվող կարգավորման պարագայում ստացվում է, որ անձը քրեական պատասխանատվության է ենթարկվում ոչ թե գաղտնազերծման արդյունքում բացահայտված հակահիրավական վարքագծի, այլ սոսկ հանձնաժողովի առաջարկը մերժելու համար: Մինչդեռ, հանձնաժողովի համապատասխան առաջարկը կազմվում է անձի համար որևէ նվազագույն իրավունք չերաշխավորող գործընթացի արդյունքում:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածների բովանդակությունից հետևում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության, անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք: Նշված հոդվածներով նախատեսված արդար և արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը կարևոր երաշխիք է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իրավունքների ու ազատությունների լիակատար և համապարփակ պաշտպանության տեսանկյունից, այն ամրագրված է նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածում:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներով (ՍԴՈ-652, ՍԴՈ-690, ՍԴՈ-719, ՍԴՈ-765, ՍԴՈ-844, ՍԴՈ-873, ՍԴՈ-890, ՍԴՈ-932, ՍԴՈ-942, ՍԴՈ-1037, ՍԴՈ-1052, ՍԴՈ-1115, ՍԴՈ-1127, ՍԴՈ-1190, ՍԴՈ-1192, ՍԴՈ-1196, ՍԴՈ-1197, ՍԴՈ-1220, ՍԴՈ-1222, ՍԴՈ-1257, ՍԴՈ-1289) հանգամանորեն անդրադարձել է արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատաքննության իրավունքների երաշխավորման սահմանադրականության խնդիրներին՝ դրանք դիտարկելով որպես դատական պաշտպանության իրավունքի անհրաժեշտ

բաղադրատարրեր՝ հավասարապես ընդգծելով դրանց կարևորությունը դատավարական գործընթացներում:

Մասնավորապես, իր 2016 թվականի հուլիսի 7-ի ՍԴՈ-1293 որոշման մեջ Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանն արձանագրել է՝

«- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստազրկել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի մատչելիությունը կարող է ունենալ այնպիսի սահմանափակումներ, որոնք չեն խաթարում այդ իրավունքի բուն էությունը»:

Անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի իրացումը երաշխավորելու տեսանկյունից առաջնահերթ կարևորություն ունի այն հարցի պատասխանը, թե որքանով է հասանելի արդարադատությունը, որքան արդյունավետ են անձի խախտված իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի իրացման պայմանները և գործիքակազմը:

Նշված հոդվածների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների բովանդակային վերլուծության հիման վրա, ինչպես նաև նկատի ունենալով միջազգային իրավական նշված մոտեցումները՝ գտնում ենք, որ նախագծով նախատեսված կարգավորումները հակասում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 61-րդ, 63-րդ և 66-րդ հոդվածներով ամրագրված դրույթներին այնքանով, որքանով իրավակիրառ պրակտիկայում հստակ հնարավորություն չեն տալիս երաշխավորելու անձի՝ արդար դատաքննության, դատական պաշտպանության իրավունքները:

Այս առումով հարկ ենք համարում նաև նշել, որ լյուստրացիայի ինստիտուտի իրավական կարգավորման, մասնավորապես, գաղտնազերծման ենթակա անձանց նվազագույն իրավունքների և դրանց ապահովման երաշխիքներին անդրադարձել են մի շարք միջազգային հեղինակավոր կառույցներ, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը և Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (այսուհետ՝ Վենետիկի հանձնաժողով): Այսպես, և՛ Վենետիկի հանձնաժողովը, և՛ Եվրոպայի խորհուրդը հստակորեն որդեգրել են այն մոտեցումը, որ պետք է տարբերակում մտցվի լյուստրացիայի՝ որպես վարչական միջոցի, և քրեորեն պատժելի արարքի համար սահմանված պատժի միջև: Գաղտնազերծումը չպետք է դառնա պատիժ: Պատիժ Քրեական օրենսգրքով պետք է նախատեսվի միայն անցյալում կատարված հանցավոր արարքների համար, և դրանց վերաբերյալ գործերի քննությունը պետք է իրականացվի քրեական դատավարությամբ սահմանված ընթացակարգերի և երաշխիքների պահպանմամբ: Մինչդեռ, առաջարկվող կարգավորմամբ ստացվում է, որ գաղտնազերծված անձը ենթակա է քրեական պատասխանատվության սոսկ զբաղեցրած պաշտոնից ինքնակամ (կամավոր) հրաժարվելու կամ դրան հավակնելուց հրաժարվելու առաջարկը մերժելու համար:

Հարկ է նշել, որ նշված փաստաթղթերով նախատեսված են նաև հստակ պահանջներ գաղտնազերծման ամբողջ գործընթացի համար: Այսպես՝

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի բանաձևերը, մասնավորապես, բանաձև (Res.) 1096 (1996 թ.)՝ նախկին կոմունիստական տոտալիտար համակարգերի ժառանգության ապամոնտաժման միջոցների վերաբերյալ բանաձևում[1] (այսուհետ՝ «լյուստրացիայի ուղեցույց» կամ «ուղեցույց») Խորհրդարանական վեհաժողովը դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ «ուղեցույցի նպատակն է ապահովել, որ

[1]Measures to dismantle the heritage of former communist totalitarian systems, Doc. 7568. 3 June 1996, http://assembly.coe.int/nw/xml/xref/x2h-xref-viewhtml.asp?fileid=7506&lang=en

լյուստրացիայի օրենքները և նմանատիպ վարչական միջոցառումները համապատասխանեն պետության՝ օրենքի գերակայության վրա հիմնված լինելու պահանջին»:

Բացի դրանից, ուղեցույցում հստակորեն նշված է, որ ոչ մի դեպքում անձը չի կարող լյուստրացիայի ենթարկվել առանց պատշաճ իրավական պաշտպանության, մասնավորապես, պետք է երաշխավորվեն պաշտպանի իրավունքը, իր դեմ օգտագործված ապացույցները վիճարկելու իրավունքը, մեղադրական և պաշտպանական ապացույցների մատչելիության, հրապարակային լսում անցկացնելու իրավունքը (եթե դա պահանջում է անձը) և որոշումը անկախ դատական մարմնին բողոքարկելու իրավունքը: Ընդ որում, սրանք նվազագույն իրավունքներ են, և դրանց ցանկը սպառիչ չէ: Նույն հարցի կապակցությամբ Վենետիկի հանձնաժողովն իր դիրքորոշմամբ հայտնել է, որ գաղտնազերծման գործընթացին ներկա գտնվելու և մասնակցելու իրավունքը պետք է հստակորեն սահմանված լինի, գործընթացը պետք է իրականացվի արդար դատաքննության պահանջների պահպանմամբ (պաշտպանի իրավունք, զենքերի հավասարություն, լսված լինելու իրավունք): Դատավարական գործընթացները պետք է կասեցնեն գաղտնազերծման մասին վարչական որոշումն ի կատար ածելը մինչև վերջնական դատական ակտի կայացումը: Յուրաքանչյուր դեպքում գաղտնազերծումը պետք է ապահովված լինի նշված բոլոր երաշխիքներով: Հարկ է նշել, որ նախագծի 10-րդ հոդվածը, սահմանափակվում է միայն նշելով, որ հանձնաժողովի նիստին կարող է ներկա գտնվել այն անձը, ում վերաբերյալ կայացվում է որոշումը, և որ հանձնաժողովի որոշումն ուժի մեջ է մտնում կայացումից հետո մեկամսյա ժամկետում, որի ընթացքում կարող է դատական կարգով բողոքարկվել այն անձի կողմից, ում վերաբերյալ այն կայացվել է: Այսինքն, նախագիծը չի սահմանում հստակ ընթացակարգեր և երաշխիքներ գաղտնազերծվող անձանց համար: Դեռ ավելին, նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովն իրավունք ունի նախազգուշացնել գաղտնազերծման ենթակա անձանց իրենց (այդ թվում՝ այլ անձանց) վերաբերյալ տեղեկատվությունը թաքցնելու կամ դիտավորյալ սուտ կամ կեղծ տեղեկատվություն հայտնելու դեպքում՝ օրենքով սահմանված կարգով քրեական պատասխանատվության ենթարկվելու մասին:

Նման կարգավորման ոչ իրավաչափության մասին է վկայում այն հանգամանքը, որ նախ՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի գործողությունը տարածվում է քրեական, քաղաքացիական կամ վարչական դատավարության շրջանակներում համապատասխան կարգավիճակ ունեցող անձանց վրա: Մինչդեռ, կասկածից վեր է, որ հանձնաժողովը դատավարություն չի իրականացնում, և նաև պարզ չէ, թե ինչ կարգավիճակ ունի գաղտնազերծվող անձը՝ վկա, թե ենթադրյալ իրավախախտում կատարած անձ: Բացի դրանից, անգամ քրեական վարույթի շրջանակներում ենթադրյալ հանցանք կատարած՝ կասկածյալի կամ մեղադրյալի դատավարական կարգավիճակ ունեցող անձը սուտ ցուցմունք տալու համար ենթակա չէ քրեական պատասխանատվության:

Հարկ է նշել, որ նախագծում հստակեցված չէ համապատասխան անձանց նախկին գործունեությամբ պայմանավորված՝ գաղտնազերծման չափանիշը: Այսպես, նախագծի 5-րդ հոդվածը պարզապես սահմանում է, որ օրենքը տարածվում է Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր ու դատական իշխանության, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների՝ նույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված ղեկավար պաշտոններ զբաղեցնող կամ դրանց հավակնող անձանց վրա, ովքեր մինչև 1991 թվականի սեպտեմբերի 21-ի Հայաստանի անկախության հանրաքվեն բացահայտ կամ գաղտնի հիմունքներով աշխատել կամ համագործակցել են նախկին ԽՍՀՄ Պետական անվտանգության կոմիտեի, հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կամ այլ երկրների հատուկ ծառայությունների հետ: Այսինքն չի նշվում, թե ինչպիսի պաշտոններ պետք է նշված անձինք զբաղեցնեին նշված կազմակերպություններում կամ ինչպիսի գործողություն պետք է իրականացնեին, որը հիմք կծառայեր նշված անձանց գաղտնազերծման համար: Այս առումով պետք է նշել, որ Վենետիկի հանձնաժողովն իր դիրքորոշումներում հղում տալով ուղեցույցին նշում է, որ գաղտնազերծումը կարող է ուղղակիորեն իրականացվել այնպիսի անձանց դեմ, ովքեր մեծ դերակատարում են ունեցել մարդու իրավունքների կոպիտ խախտման գործում կամ զբաղեցրել են

բարձր պաշտոններ մարդու իրավունքների խախտման համար պատասխանատու կազմակերպություններում: Ոչ ոք չի կարող ենթարկվել գաղտնազերծման միայն իր անձնական կարծիքի համար, համագործակցող անձինք պետք է գաղտնազերծվեն միայն այն դեպքում, երբ նրանց գործողություններն իրականում վնասել են այլ անձանց և նրանք գիտեին կամ պետք է իմանային նման վնաս հասցնելու մասին: Ավելին, 18 տարեկանից ցածր անձանց համար, ովքեր ներգրավված են եղել համապատասխան գործողություններին, լինի դա համագործակցության ձևով, թե օրինակ որևէ կազմակերպության անդամակցության ձևով, պետք է բացառվի գաղտնազերծումը: Բացառությամբ այն դեպքերի, երբ գաղտնազերծումն իրականացվում է վերևում նշված՝ անձի՝ բարձր պաշտոն զբաղեցնելու փաստով, գաղտնազերծումը պետք է իրականացվի անմեղության կանխավարկածի սկզբունքի պահպանմամբ: Մեղքը պետք է ապացուցվի՝ հաշվի առնելով անձի վարքագիծը: Եթե նախկին ռեժիմի պայմաններում միայն որոշակի կուսակցությանը, կազմակերպությանը կամ վարչական մարմնին պատկանելը արգելք է պետական ծառայության համար, ապա նման արգելքը դառնում է խմբային և խտրական պատժի ձև, որն անհամատեղելի է մարդու իրավունքների չափանիշների հետ: Այդ պարագայում գաղտնազերծումը դառնում է քաղաքական գործիք ընդդիմախոսներին ճնշելու համար:

Նախագծի քննարկման շրջանակներում անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ գաղտնազերծման նպատակին: Հարկ է նշել, որ նշված միջազգային կառույցները հատուկ ընդգծում են, որ լյուստրացիայի նպատակը ոչ թե անձանց պատժելն է, այլ նոր ձևավորվող ժողովրդավարությունը պահպանելը: Հենց այս նպատակի համատեքստում էլ նշված մարմինները սահմանում են որոշակի սահմանափակ ժամկետներ լյուստրացիայի իրականացման համար: Մասնավորապես, ուղեցույցի համաձայն, լյուստրացիայի հիման վրա անձի պաշտոնանկության դեպքում պաշտոններ զբաղեցնելու արգելքը պետք է սահմանափակվի հինգ տարով, իսկ ինքնին լյուստրացիոն միջոցառումները նպատակահարմար է իրագործել ոչ ուշ, քան մինչև 1999 թվականի դեկտեմբերի 31-ը, քանի որ նոր ժողովրդավարական համակարգը պետք է, որ նշված ժամկետում արդեն ձևավորված

լինի բոլոր հետխորհրդային երկրներում: Նախագծի հիմնավորման մեջ նշվում է, որ նախագիծը մշակելիս հաշվի է առնվել Հունգարիայի, Ալբանիայի, Լիտվայի և այլ երկրների փորձը: Հարկ է նշել, որ այս երկրների կապակցությամբ Վենետիկի հանձնաժողովը բազմիցս նշել է, որ Խորհրդային Միության անկումից 15-25 տարի անց լյուստրացիոն օրենսդրության նախատեսումը խնդրահարույց է, հստակ հիմնավորման կարիք ունի և որոշ դեպքերում կարող է դիտարկվել որպես քաղաքական ընդդիմախոսներին ճնշելու միջոց: Այս առումով, տեղին է հիշատակել նաև, որ լյուստրացիայի կիրառման ժամկետների վերաբերյալ իր դիրքորոշումն է հայտնել նաև Եվրոպական դատարանը: Այսպես, դատարանը նշել է, որ Խորհրդային Միության փլուզումից 10-15 տարի հետո անձին լյուստրացիայի ենթարկելը, միայն նրա համար, որ նա եղել է կոմունիստական կուսակցության անդամ չի կարող լինել լյուստրացիայի արդարացում, քանի որ շատ երկար ժամանակ է անցել (տե՛ս Sidabras and Džiautas v. Lithuania - 55480/00 and 59330/00 Judgment 27.7.2004):

Հաշվի առնելով լյուստրացիայի կիրառման ժամկետների վերաբերյալ նշված մոտեցումները՝ նախագծի ներկայացումը հարցականի տակ է դնում նախագծի 3-րդ հոդվածով սահմանված ժողովրդավարության ամրապնդման նպատակը:

Այսպիսով, ամփոփելով կարող ենք եզրահանգել, որ նախագիծը ոչ միայն հակասում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, այլ նաև դրանով հաշվի չեն առնվել միջազգային իրավական չափանիշները:

Բացի դրանից, շարունակելով, անհրաժեշտ է նշել, որ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ «Հատուկ կարևորություն» և «Հույժ գաղտնի» գաղտնիության աստիճան ունեցող տեղեկությունները պահպանվում են մինչև 30 տարի: Ելնելով անհրաժեշտությունից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է սահմանել նշված ժամկետից ավելի երկար ժամկետներ, իսկ «Գաղտնի» գաղտնիության աստիճան ունեցող տեղեկությունները պահպանվում են մինչև 10 տարի: Այս պարագայում ստացվում է, որ անձի վերաբերյալ

գաղտնազերծվող տեղեկատվության մեծ մասն արդեն իսկ մատչելի է, ինչը ոչ նպատակահարմար է դարձնում գաղտնազերծման հանձնաժողովի ստեղծումը:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ նախագծում առկա են հստակեցման և խմբագրման կարիք ունեցող մի շարք դրույթներ: Այսպես՝

1) ուղեցույցի համաձայն՝ լյուստրացիան պետք է տարածվի այն պաշտոնների վրա, որոնց կապակցությամբ ողջամիտ ենթադրություն կարող է արվել, որ համապատասխան սուբյեկտը կարող է լուրջ վտանգ ներկայացնել հասարակության և ժողովրդավարության համար, և երկրորդ՝ լյուստրացիան չպետք է տարածվի ընտրովի պաշտոնների վրա: Նշված չափանիշների լույսի ներքո խնդրահարույց է նախագծի 6-րդ հոդվածում գաղտնազերծման ենթակա մի շարք ընտրովի պաշտոնների նախատեսումը: Այսպես, նախագծով որպես գաղտնազերծման ենթակա անձ նշվում են նաև Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահը, պալատի խորհրդի անդամները, մինչդեռ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների 64-րդ հոդվածը երաշխավորում է իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը: Առաջարկվող կարգավորումը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի, քանի որ այն միջամտություն է ինքնակառավարվող մարմնի՝ փաստաբանների պալատի և դրա խորհրդի անդամների գործունեությանը: Լրացուցիչ հիմնավորման կարիք ունի նաև գաղտնազերծվող անձանց շրջանակում, օրինակ, հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամներին, գիտությունների ազգային ակադեմիայի ղեկավարին նախատեսումը: Այսպես, Վենետիկի հանձնաժողովը, անդրադառնալով Ուկրաինայի օրենսդրությամբ այնպիսի գաղտնազերծվող պաշտոնյաների նախատեսմանը, ինչպիսիք են Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի նախագահը, Նախագահի աշխատակազմի ղեկավարը, Պետական գույքային ֆոնդի ղեկավարը և այլն, արտահայտել է այն մտահոգությունը, որ պետք է լրացուցիչ հիմնավորվի, թե ինչու են այդ անձինք էական վնաս ներկայացնում ժողովրդավարության համար.

2) նախագծի 4-րդ հոդվածով սահմանված են սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները, որոնք հստակ չեն և որոշ դեպքերում միաբովանդակ: Այսպես, նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ գործակալը հատուկ ծառայությունների հետ գաղտնի (ոչ բացահայտ) համագործակցած և նրանց առաջադրանքներն ու հանձնարարությունները կատարած անձն է, իսկ նույն մասի 7-րդ կետի համաձայն՝ վստահելի անձ է հանդիսանում հատուկ ծառայությունների հետ գաղտնի համագործակցած անձը, ով ինքնակամ տեղեկատվություն է տրամադրել այն անձանց ու փաստերի վերաբերյալ, որոնք հետաքրքրել են հատուկ ծառայություններին, ինչպես նաև կատարել է նրանց հանձնարարականները: Ստացվում է, որ վստահելի անձը նույնպես հատուկ ծառայությունների հետ գաղտնի համագործակցած այն անձն է, որը կատարում է նրանց հանձնարարականները, այդ թվում՝ նրանց ինքնակամ տեղեկատվություն տրամադրելով: Հետևաբար, օրենքում նշված հասկացություններն անհրաժեշտ է տարանջատել՝ հստակ սահմանելով, թե որ դեպքում է անձը հանդիսանում գործակալ, որում՝ վստահելի անձ.

3) նախագծի 6-րդ հոդվածում սահմանված են գաղտնազերծման ենթակա անձինք և պաշտոնները, որոնց շարքում նշված է նաև պետական զանգվածային լրատվամիջոցների ղեկավար կազմը: Այս առումով պարզ չէ և անհրաժեշտ է հստակ նշել, թե զանգվածային լրատվամիջոցների ղեկավար կազմից ով է օրենքով սահմանված կարգով ենթարկվելու գաղտնազերծման.

4) նախագծում հստակ սահմանված չէ հանձնաժողովի կարգավիճակը: Հստակ չէ՝ արդյոք այն վարչական մարմին է, թե ոչ, ինչպիսի որոշումներ է ընդունում և այլն: Այսպես, նախագծի 10-րդ հոդվածը սահմանում է, որ հանձնաժողովը 9-րդ հոդվածով նախատեսված որոշումները կայացնում է փակ նիստում: Նախագծի 9-րդ հոդվածը միևնույն ժամանակ սահմանում է, որ օրենքի 6-րդ հոդվածով սահմանված գաղտնա-զերծման ենթակա պաշտոններ զբաղեցնող կամ դրանց հավակնող և օրենքով սահմանված կարգով բացահայտված անձանց հանձնաժողովը պարտավոր է առաջար-կել ինքնակամ (կամավոր) հրաժարվել զբաղեցրած պաշտոնից կամ դրան հավակնելուց,

իսկ մնացած դեպքերում սահմանվում է, որ հանձնաժողովը կայացնում է որոշում: Նշված կարգավորումից հստակ չէ, թե ինչ եղանակով է զբաղեցրած պաշտոնից կամ դրան հավակնելուց հրաժարվելու առաջարկ ներկայացվում: Այն ներկայացվում է որոշման տեսքով, թե՝ ոչ.

5) նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանձնաժողովում ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցությունների, պատգամավորական խմբերի և անկախ պատգամավորների կողմից առաջադրված՝ մեկական արհեստավարժ մասնագետ, ընդ որում՝ խորհրդարանական ընդդիմադիր խմբակցությունների կողմից ներկայացված երկուական ներկայացուցիչ: Այս առումով պարզ չէ, թե ինչով է պայմանավորված նշված մարմիններից հանձնաժողովի կազմում մեկական մասնագետ ընդգրկելը, իսկ խորհրդարանական ընդդիմադիր խմբակցությունների կողմից՝ երկուական ներկայացուցիչ ընդգրկելը: Նախագծին կից ներկայացված հիմնավորման մեջ նույնպես բացակայում է նախագծով ներկայացված հանձնաժողովի ձևավորման կարգի հիմնավորումը: Բացի դրանից, չկան հստակ չափանիշներ նշված անձանց ընտրելու, նրանց արհեստավարժությունն ստուգելու համար: Ավելին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված անձինք պետք է իրականացնեն գաղտնազերծում, պետք է առկա լինեն մեխանիզմներ նշված անձանց կողմից մինչև 1991 թվականի սեպտեմբերի 21-ի Հայաստանի անկախության հանրաքվեն բացահայտ կամ գաղտնի հիմունքներով նախկին ԽՍՀՄ Պետական անվտանգության կոմիտեի, հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կամ այլ երկրների հատուկ ծառայությունների հետ աշխատելու կամ համագործակցելու փաստն ստուգելու համար.

6) նախագծում առկա են ներքին հակասություններ, մասնավորապես, նախագծի 7-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարու-

թյունն է հաստատում հանձնաժողովի կանոնադրությունը՝ վերջինիս ներկայացմամբ, մինչդեռ, նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հանձնաժողովը ձևավորումից հետո մեկամսյա ժամկետում մշակում և հաստատում է իր կանոնադրությունը: Այդ առումով նախագծի նշված դրույթներն անհրաժեշտ է վերանայել և խմբագրել՝ համապատասխանեցնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի դրույթներին.

7) նախագծի 7-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված է, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունն ապահովում է հանձնաժողովի անդամների վարձատրությունը: Այս առումով հարկ է նշել, որ հանձնաժողովի անդամներն իրենց հիմնական աշխատանքի վայրից արդեն իսկ ստանում են վարձատրություն և պարզ չէ, թե ինչ իրավական հիմքով է Հայաստանի Հանրապետության կառավարությունն ապահովելու վերջիններիս վարձատրությունը: Բացի դրանից, նշված դրույթը հակասում է նաև «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, որը սահմանում է, որ հանրային ծառայողը և բարձրաստիճան պաշտոնատար անձը չեն կարող անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական, ստեղծագործական կամ ընտրական հանձնաժողովի անդամի կամ ընտրական հանձնաժողովում տեխնիկական սարքավորումն սպասարկող մասնագետի կարգավիճակից բխող աշխատանքից.

8) նախագծում հանձնաժողովի գործունեության կարգը հստակ սահմանված չէ: Այսպես, նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը հավաքագրում, ստուգում և վերլուծում է հատուկ ծառայությունների հետ գաղտնի համագործակցած անձանց տրամադրած փաստաթղթերը, նյութերը և այլ տեղեկությունները, ինչպես նաև դրանք ներկայացնում է հանձնաժողովին՝ ռեեստրում այդ անձանց հաշվառելու համար: Այս առումով հստակեցման կարիք ունեն հետևյալ հարցերը՝

ա. նախ անհրաժեշտ է հստակեցնել, թե ինչ կարգով է հանձնաժողովը հավաքագրում, ստուգում և վերլուծում փաստաթղթերը, նյութերը և այլ տեղեկությունները,

բ. անհրաժեշտ է պարզաբանել, թե ինչպես կարող է հանձնաժողովն իր իսկ կողմից հավաքագրած, ստուգած և վերլուծած փաստաթղթերը, նյութերը և այլ տեղեկությունները ներկայացնել հենց իրեն, քանի որ նախագծով առաջարկված խմբագրությունից հետևում է, որ հանձնաժողովը փաստաթղթերը, նյութերը և այլ տեղեկությունները ներկայացնում է հանձնաժողովին.

9) նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը հատուկ ծառայությունների հետ համագործակցության մեջ խոստովանած անձանց խնդրանքով միջոցներ է ձեռնարկում նրանց շանտաժի, հավաքագրման կամ անօրինական գործունեության մեջ ներգրավելու փորձերից պաշտպանության ուղղությամբ: Այս առումով պարզ չէ, թե ինչ եղանակներով է դրսևորվելու այդ անձանց շանտաժի, հավաքագրման կամ անօրինական գործունեության մեջ ներգրավելու փորձերից պաշտպանությունը.

10) նախագծի 11-րդ հոդվածով սահմանված է պատասխանատվություն սույն օրենքի պահանջների խախտման համար, այն է՝ վարչական, քրեական և կարգապահական: Մինչդեռ, նախագծի հետ փաթեթում ներկայացվել է միայն «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, և պարզ չէ, թե ինչ վարչական և կարգապահական պատասխանատվության մասին է խոսքը:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ խնդիրն արդիական չէ և «Գաղտնազերծման (լյուստրացիայի) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն ու դրան հարակից ներկայացված օրենքների նախագծերի փաթեթն ընդունելի չեն:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Արփինե Հովհաննիսյանը:

Նախագծերի ընդունման դեպքում նախագծում նշված մարմինների կողմից հանձնաժողովի անդամներ առաջադրելուց հետո մեկամսյա ժամկետում պետք է ընդունվեն հանձնաժողովի կանոնադրությունը հաստատելու, ինչպես նաև հանձնաժողովի պետական և ծառայողական գաղտնիք կազմող տեղեկություններին ծանոթանալու կարգը սահմանելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումները:

Կից ներկայացվում են օրենքների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Գաղտնազերծման (լյուստրացիայի) մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Ազգային անվտանգության մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունման դեպքում

«Գաղտնազերծման (լյուստրացիայի) մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Ազգային անվտանգության մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

Եզրակացություն
«Գաղտնազերծման (լյուստրացիայի) մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Ազգային անվտանգության մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Գաղտնազերծման (լյուստրացիայի) մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Ազգային անվտանգության մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ նախագծեր) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծերի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագծերը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն **չեզոք ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն **չեզոք ազդեցություն:**

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Գաղտնազերծման (լյուստրացիայի) մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Ազգային անվտանգության մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ

«Գաղտնազերծման (լյուստրացիայի) մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Ազգային անվտանգության մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերն իրենց մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Գաղտնազերծման (լյուստրացիայի) մասին», «Ազգային Ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին»,«Ազգային անվտանգության մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Գաղտնազերծման (լյուստրացիայի) մասին», «Ազգային Ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին»,«Ազգային անվտանգության մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ Օրենքներ) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքների նախագծերի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքների նախագծերը բնապահպանության ոլորտին չեն առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չեն հակասում:

Օրենքների կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Գաղտնազերծման (լյուստրացիայի) մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Ազգային անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Պետական ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Գաղտնազերծման (լյուստրացիայի) մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Ազգային անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Պետական ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերով (այսուհետ՝ Նախագծեր) նախատեսվում է կարգավորել Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավար և այլ պաշտոնատար անձանց գաղտնազերծման իրավական հիմքերը, նպատակները, կարգը և դրանց հետ կապված այլ հարաբերությունները:

Նախագծերով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին շուկայի հետ, ուստի և Նախագծերի ընդունմամբ որևէ շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծերի ընդունմամբ մրցակցային միջավայրի վրա ազդեցություն չհայտնաբերելու եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Գաղտնազերծման (լյուստրացիայի) մասին», ««Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Ազգային անվտանգության մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Պետական ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի՝ տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Գաղտնազերծման (լյուստրացիայի) մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Ազգային անվտանգության մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Պետական ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագիծ)՝ գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծով նախատեսվում է կարգավորել Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավար և այլ պաշտոններ զբաղեցնող անձանց գաղտնազերծման իրավական հիմքերը, նպատակները, կարգը և դրանց հետ կապված այլ հարաբերություններ:

Նախագծի ընդունման և կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ***նախատեսվում է չեզոք ազդեցություն:***

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Գաղտնազերծման (լյուստրացիայի) մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Ազգային անվտանգության մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

Նախագծերով նախատեսվում է հատուկ ծառայությունների հետ գաղտնի համագործակցած անձանց գործնեության բացահայտման, գնահատման ինչպես նաև վերջիններիս գաղտնազերծման ենթակա պաշտոններ զբաղեցնելը կանխելու և սահմանափակելու նպատակով ստեղծել միջգերատեսչական հանձնաժողով, և առաջարկվում է սահմանել, որ ՀՀ կառավարությունը ապահովում է նշյալ հանձնաժողովի անդամների վարձատրությունը:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ հայտնում ենք, որ Նախագծերի ընդունումը ՀՀ համայնքների բյուջեների մուտքերի և ելքերի փոփոխմանը չի հանգեցնի, իսկ ՀՀ պետական բյուջեի ծախսերի մասով՝ կառաջացնի լրացուցիչ միջոցների հատկացման անհրաժեշտություն, որի կոնկրետ չափը հնարավոր չէ որոշել՝ համապատասխան տվյալների բացակայությամբ պայմանավորված: Միաժամանակ, Նախագծերի փաթեթի ընդունման ազդեցությունը ՀՀ պետական բյուջեի եկամուտների վրա կարող է լինել դրական, սակայն ՀՀ պետական բյուջեում ծախսերի ավելացումը կլինի անհամեմատ ավելի մեծ, քան եկամուտները:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-1088-07.10.2016-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ԳԱՂՏՆԱԶԵՐԾՄԱՆ (ԼՅՈՒՍՏՐԱՑԻԱՅԻ) ՄԱՍԻՆ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանության, պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավար եւ այլ պաշտոններ զբաղեցնող անձանց գաղտնազերծման իրավական հիմքերը, նպատակները, կարգը եւ դրանց հետ կապված այլ հարաբերություններ:

Հոդված 2. Գաղտնազերծման (լյուստրացիայի) իրավական հիմքերը

1. Գաղտնազերծումը կարգավորվում է սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով եւ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերով:

2. Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են այդ նորմերը:

Հոդված 3. Օրենքի նպատակը

1. Սույն օրենքով իրականացվում են Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ոլորտը կարգավորող օրենսդրության հիմնարար դրույթներն ու սկզբունքները պետության եւ հասարակության, մարդու եւ քաղաքացու իրավունքների, ազատությունների ու անձնական անվտանգության պաշտպանության նպատակով՝ ապահովելով նրանց պաշտպանվածությունը նախկին ԽՍՀՄ եւ օտարերկրյա հատուկ ծառայությունների հետ համագործակցած անձանցից, ներազդեցությունից, շանտաժից ու հավաքագրումից կամ անօրինական գործունեության մեջ ներգրավելուց կամ դրանց փորձերից:

2. Հայաստանի Հանրապետությունում գաղտնազերծման նպատակներ են.

1) ժողովրդավարական հասարակության եւ սահմանադրական կարգի ամրապնդումը,

2) ազգային անվտանգության ապահովման կանխարգելիչ միջոցառումների իրականացումը,

3) սահմանադրական կարգի հիմունքների եւ պետության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների կանխումը,

4) հանրության սահմանադրական իրավունքների եւ ազատությունների, պատվի ու բարի համբավի պաշտպանությունը,

5) Խորհրդային, ֆաշիստական եւ այլ ամբողջատիրական գաղափարախոսության ու քարոզչության տարածման կանխումը:

Հոդված 4. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվում են հետեւյալ հիմնական հասկացությունները.

1) գաղտնազերծում (լյուստրացիա)՝ միջոցների համախումբ, որով բացահայտվում, հավաքագրվում, գնահատվում են սույն Օրենքի 5-րդ հոդվածով գաղտնազերծման ենթակա անձանց վերաբերյալ տեղեկատվությունը, գրանցվում եւ հաշվառվում են հետեւյալ անձինք, կանխվում եւ արգելվում է նրանց կողմից Օրենքի 6-րդ հոդվածով սահմանված պաշտոններ զբաղեցնելը,

2) գաղտնազերծման միջգերատեսչական հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ սույն օրենքով սահմանված կարգով կազմավորված գաղտնազերծում իրականացնող Հանձնաժողով,

3) հատուկ ծառայություններ (այսուհետ՝ հատուկ ծառայություններ ՝ նախկին ԽՍՀՄ Պետական անվտանգության կոմիտե (ՊԱԿ), հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմիններ կամ այլ հատուկ ծառայություններ, ինչպես նաեւ այլ երկրների հատուկ ծառայություններ,

4) հատուկ ծառայությունների հետ գաղտնի կամ բացահայտ համագործակցած անձ՝ հատուկ ծառայությունների հանձնարարականների կատարմանը փաստացի եւ գիտակցաբար գործակցած անձ, ով գրավոր կամ բանավոր պարտավորված է եղել գաղտնի կամ բացահայտ համագործակցել այն դեպքերում, եթե գործունեությունը չի կանոնակարգվել տվյալ ծառայությունների կանոնակարգերով կամ օրենսդրությամբ (գործակալ, ռեզիդենտ, վստահելի անձ, հանդիպումների համար քողարկված /կոնսպիրատիվ/ տարածք, բնակարան կամ այլ շինություն, պահող, վարձակալող կամ տրամադրող անձ, արտահաստիքային օպերատիվ աշխատակից կամ հատուկ ծառայությունների հետ գաղտնի համագործակցած անձ):

5) գործակալ՝ հատուկ ծառայությունների հետ գաղտնի (ոչ բացահայտ) համագործակցած եւ նրանց առաջադրանքներն ու հանձնարարությունները կատարած անձ,

6) ռեզիդենտ՝ հատուկ ծառայությունների հետ գաղտնի համագործակցած անձ, ով իրեն ներկայացված գործակալների ու վստահելի անձանց հետ կազմակերպել է աշխատանքները,

7) վստահելի անձ՝ հատուկ ծառայությունների հետ գաղտնի համագործակցած անձ, ով ինքնակամ տեղեկատվություն է տրամադրել այն անձանց ու փաստերի վերաբերյալ, որոնք հետաքրքրել են հատուկ ծառայություններին, ինչպես նաեւ կատարել է նրանց հանձնարարությունները,

8) քողարկված /կոնսպիրատիվ/ տարածք կամ այլ շինություն պահող, վարձակալող կամ տրամադրող անձ՝ հատուկ ծառայությունների հետ գաղտնի համագործակցած անձ, ով պահել, վարձակալել կամ տրամադրել է նրանց տնօրինման ներքո գտնվող տարածք բնակարան կամ այլ շինություն՝ պայմաններ ապահովելով գործակալական կամ օպերատիվ այլ գործունեության համար,

9) հանդիպումների համար բնակարան պահող, վարձակալող կամ տրամադրող անձ՝ հատուկ ծառայությունների հետ գաղտնի համագործակցած անձ, ով բնակելի տարածքներ է տրամադրել գործակալների եւ ռեզիդենտների հետ այդ ծառայությունների աշխատանքի համար եւ այդ աշխատանքների համար ապահովել է անհրաժեշտ կոնսպիրատիվ պայմաններ,

10) արտահաստիքային օպերատիվ աշխատակից՝ հատուկ ծառայությունների հետ գաղտնի համագործակցած անձ, ով հասարակական հիմունքներով օժանդակել է հատուկ ծառայությունների հակահետախուզական գործունեությանը եւ աշխատանքներ է տարել իրեն վստահված գործակալների հետ, ընտրել վստահելի անձանց, ինչպես նաեւ կատարել այլ առաջադրանքներ ու հանձնարարություններ,

11) հատուկ ծառայությունների հետ համագործակցած այլ անձ՝ անձ, ով նախկին ԽՍՀՄ կամ այլ երկրի հատուկ ծառայությունների հետ համագործակցած մեկ այլ հատուկ ծառայության հանձնարարությամբ իրականացրել է գործակալի, ռեզիդենտի, վստահելի անձի, քողարկված /կոնսպիրատիվ/ տարածք կամ այլ շինություն պահող, վարձակալող կամ տրամադրող անձի, հանդիպումների համար բնակարան պահող, վարձակալող կամ տրամադրող անձի, արտահաստիքային օպերատիվ աշխատակցի եւ այլ գործառույթներ,

12) հատուկ ծառայությունների հետ համագործակցած անձանց գրանցում՝ հատուկ ծառայությունների հետ գաղտնի կամ բացահայտ համագործակցած անձանց, ինչպես նաեւ նրանց ու հատուկ ծառայությունների մասին անվտանգության մարմինների կազմած տեղեկությունների հաշվառում ռեեստրում,

13) ռեեստր՝ Հանձնաժողովի կանոնադրությամբ սահմանված կարգով եւ ձեւով վարվող տվյալների, տեղեկատվության ամբողջություն, որում հաշվառվում են հատուկ ծառայությունների հետ գաղտնի համագործակցած անձինք եւ նրանց նախկին գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը:

Հոդված 5. Սույն օրենքի գործողության ոլորտը

Սույն օրենքը տարածվում է Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր ու դատական իշխանության, պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների՝ Օրենքի 6-րդ հոդվածով սահմանված ղեկավար պաշտոններ զբաղեցնող կամ դրանց հավակնող անձանց վրա, ովքեր մինչեւ 1991 թվականի սեպտեմբերի 21-ի Հայաստանի անկախության հանրաքվեն բացահայտ կամ գաղտնի հիմունքներով աշխատել կամ համագործակցել են նախկին ԽՍՀՄ Պետական անվտանգության կոմիտեի, հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կամ այլ երկրների հատուկ ծառայությունների հետ:

Հոդված 6. Գաղտնազերծման ենթակա անձինք եւ պաշտոնները

Սույն օրենքով սահմանված կարգով գաղտնազերծման ենթակա են՝ Հայաստանի Հանրապետության Նախագահը, Հայաստանի Հանրապետության վարչապետը, Հայաստանի Հանրապետության կառավարության անդամները եւ նրանց տեղակալները, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական կառավարման մարմինների ղեկավարներն ու նրանց տեղակալները, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորները, Հայաստանի Հանրապետության Վերահսկիչ պալատի նախագահը, Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարը, Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմը, Ազգային անվտանգության ծառայության կենտրոնական աշխատակազմի, տարածքային մարմինների եւ սահմանապահ զորքերի ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձինք, Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի անդամները, Հայաստանի Հանրապետության վճռաբեկ, վերաքննիչ, առաջին ատյանի եւ մասնագիտացված դատարանների դատավորները, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը եւ դատախազները, Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամները, Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանը, Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի ղեկավարը եւ տեղակալը, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը, Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավարը, Հայաստանի Հանրապետության մարզպետները, քաղաքապետերը, համայնքի ղեկավարները եւ ավագանու անդամները, Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի նախագահը եւ Կենտրոնական բանկի խորհրդի անդամները, օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների, միջազգային կազմակերպություններում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցչությունների, օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հիմնարկների ղեկավարները եւ աշխատակիցները, Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի ղեկավարը, բարձրագույն ուսումնական հաստատությունների ղեկավարները, Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի անդամները, սույն հոդվածում սահմանված անձանց խորհրդականները, օգնականները եւ մամլո քարտուղարները, նոտարները, Հայաստանի Հանրապետության Փաստաբանների պալատի նախագահը, Պալատի խորհրդի անդամները, պետական զանգվածային լրատվամիջոցների ղեկավար կազմը, խմբագիրները եւ լրագրողները, ինչպես նաեւ այն անձինք, ովքեր հավակնում են (թեկնածու են) զբաղեցնել սույն հոդվածով սահմանված պաշտոնները:

Հոդված 7. Հանձնաժողովի կազմավորման կարգը

1. Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր նորընտիր Ազգային ժողովի առաջին նստաշրջանի բացման օրվան հաջորդող մեկ ամսվա ընթացքում սույն հոդվածով սահմանված

կարգով կազմավորվում է Հանձնաժողով՝ հատուկ ծառայությունների հետ գաղտնի համագործակցած անձանց գործունեության բացահայտման, գնահատման, ինչպես նաեւ վերջիններիս սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված պաշտոններ զբաղեցնելը կանխելու եւ սահմանափակելու (կամ գաղտնազերծելու) նպատակով:

2. Հանձնաժողովում ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության Գլխավոր դատախազության, Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ծառայության, Հայաստանի Հանրապետության ոստիկանության, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցությունների, պատգամավորական խմբերի եւ անկախ պատգամավորների կողմից առաջադրված՝ մեկական արհեստավարժ մասնագետ, ընդ որում՝ խորհրդարանական ընդդիմադիր խմբակցությունների կողմից ներկայացված երկուական ներկայացուցիչ:

3. Հանձնաժողովն իր կազմից ընտրում է հանձնաժողովի նախագահ եւ քարտուղար, ընդ որում՝ նրանցից մեկը պետք է լինի ընդդիմության ներկայացրած անդամը:

4. Հանձնաժողովի կազմում չեն կարող ընդգրկվել սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված Հայաստանի Հանրապետության գործադիր եւ դատական իշխանության մարմինների ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձինք:

5. Հայաստանի Հանրապետության Գլխավոր դատախազության, Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ծառայության, Հայաստանի Հանրապետության ոստիկանության, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցությունների, պատգամավորական խմբերի եւ անկախ պատգամավորների կողմից Հանձնաժողովի անդամներ առաջադրելուց հետո մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարությունը հաստատում է Հանձնաժողովի կազմը եւ վերջինիս ներկայացմամբ՝ կանոնադրությունը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ապահովում է Հանձնաժողովի անդամների վարձատրությունը եւ բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմանները:

6. Հանձնաժողովի անդամի հրաժարականի, հետկանչի կամ պաշտոնը թափուր մնալու դեպքերում սույն օրենքով նրան առաջադրելու իրավունք ունեցող մարմինները պաշտոնը թափուր մնալու օրվանից հետո երկշաբաթյա ժամկետում Հանձնաժողովին են ներկայացնում նոր անդամի թեկնածությունը:

Հանձնաժողովի ներկայացմամբ Կառավարությունը իր առաջիկա նիստում փոփոխություն է կատարում Հանձնաժողով ստեղծելու մասին որոշման մեջ:

7. Հանձնաժողովը գործում է մինչեւ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի լիազորությունների ավարտը կամ արձակումը:

Հոդված 8. Հանձնաժողովի գործունեության կարգը

Հանձնաժողովը՝

1) ձեւավորումից հետո մեկամսյա ժամկետում մշակում եւ հաստատում է իր կանոնադրությունը,

2) ստեղծում է աշխատանքային խումբ, որն արձանագրում է հատուկ ծառայությունների հետ գաղտնի համագործակցած անձանց խոստովանությունները, նրանց եւ հատուկ ծառայությունների գործունեության մասին տեղեկությունները եւ դրանք փոխանցում է Հանձնաժողովին,

3) հավաքագրում, ստուգում եւ վերլուծում է հատուկ ծառայությունների հետ գաղտնի համագործակցած անձանց տրամադրած փաստաթղթերը, նյութերը եւ այլ տեղեկությունները, ինչպես նաեւ դրանք ներկայացնում է Հանձնաժողովին՝ ռեեստրում այդ անձանց հաշվառելու համար,

4) հավաքագրում, ստուգում եւ կանոնակարգում է հատուկ ծառայությունների հետ գաղտնի համագործակցած անձանց տրամադրած տեղեկությունները եւ նրանց նախկին գործունեության մասին տեղեկատվությունը,

5) հատուկ ծառայությունների հետ համագործակցության մեջ խոստովանած անձանց խնդրանքով միջոցներ է ձեռնարկում նրանց շանտաժի, հավաքագրման կամ անօրինական գործունեության մեջ ներգրավելու փորձերից պաշտպանության ուղղությամբ,

6) սահմանում է հրապարակման ենթակա բոլոր տեղեկությունները եւ հրապարակում դրանք,

7) վարում է հատուկ ծառայությունների հետ գաղտնի համագործակցած անձանց ռեեստր:

Հոդված 9. Հանձնաժողովի իրավունքներն ու պարտականությունները

1. Սույն օրենքով սահմանված կարգով Հանձնաժողովն իրավունք ունի՝

1) ստանալ եւ հավաքագրել գաղտնազերծման ենթակա անձանց վերաբերյալ սույն օրենքի 8-րդ հոդվածում նշված տեղեկությունները՝ ներառյալ պետական եւ ծառայողական գաղտնիք պարունակող, որոնք առնչվում են սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված գաղտնազերծման ենթակա պաշտոններին,

2) բացահայտել հատուկ ծառայությունների հետ գաղտնի համագործակցած անձանց,

2. Հանձնաժողովը պարտավոր է՝

1) օրենքի 6-րդ հոդվածով սահմանված գաղտնազերծման ենթակա պաշտոններ զբաղեցնող կամ դրանց հավակնող եւ սույն հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետով բացահայտված անձանց առաջարկել ինքնակամ (կամավոր) հրաժարվել զբաղեցրած պաշտոնից կամ դրան հավակնելուց,

2) որոշում կայացնել՝ գաղտնազերծելու եւ հրապարակելու սույն հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետով սահմանված անձանց մասին տեղեկատվությունը, եթե մերժվում է Հանձաժողովի՝ սույն հոդվածի 2-րդ մասի 1)-ին կետով սահմանված առաջարկությունը, ինչպես նաեւ տվյալ անձի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել համապատասխան մարմնին՝ պաշտոնանկության, թեկնածության գրանցումը չեղյալ ճանաչելու առաջարկով,

3) ապահովել գաղտնազերծման ենթարկվող անձի, նրա վերաբերյալ տվյալների եւ ռեեստրի տեղեկատվության գաղտնիությունը՝ բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի,

4) նախազգուշացնել գաղտնազերծման ենթակա անձանց իրենց (այդ թվում՝ այլ անձանց) վերաբերյալ տեղեկատվությունը թաքցնելու կամ դիտավորյալ սուտ կամ կեղծ տեղեկատվություն հայտնելու դեպքում՝ օրենքով սահմանված կարգով քրեական պատասխանատվության ենթարկվելու մասին,

5) սույն հոդվածի 2-րդ մասի 2)-րդ կետով սահմանված դեպքում գաղտնազերծել եւ հրապարակել Հանձնաժողովի ենթակայության տակ գտնվող ողջ տեղեկատվությունը,

զ) հիմնավորել Հանձնաժողովի կողմից կայացրած որոշումը,

6) հանդես գալ դատարանում, եթե Հանձնաժողովի կողմից կայացրած որոշումը դատական կարգով բողոքարկվել է,

7) որոշում կայացնել՝ գաղտնազերծելու եւ հրապարակելու Հանձնաժողովի ենթակայության տակ գտնվող ողջ տեղեկատվությունը՝ առանց պահպանելու սույն հոդվածի 2-րդ մասի 2)-րդ կետով սահմանված ընթացակարգը, եթե գաղտնազերծման ենթակա անձի կողմից իրագործվել է մարդկության դեմ ուղղված զինվորական հանցագործություն կամ ցեղասպանություն:

Հոդված 10. Հանձնաժողովի կողմից որոշումների կայացման կարգը եւ բողոքարկումը

1. Հանձնաժողովը սույն օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված որոշումները կայացնում է փակ նիստում՝ Հանձնաժողովի անդամների ձայների 2/3-ով: Հանձնաժողովի նիստն իրավազոր է անդամների 2/3-ի ներկայության դեպքում:

2. Հանձնաժողովի նիստին կարող է ներկա գտնվել այն անձը, ում վերաբերյալ կայացվում է որոշումը:

3. Հանձնաժողովի որոշումն ուժի մեջ է մտնում կայացումից հետո մեկամսյա ժամկետում, որի ընթացքում կարող է դատական կարգով բողոքարկվել այն անձի կողմից, ում վերաբերյալ այն կայացվել է:

4. Հանձնաժողովի՝ ուժի մտած որոշումները ենթակա են պարտադիր կատարման:

Հոդված 11. Պատասխանատվությունը սույն օրենքի պահանջների խախտման համար

Օրենսդրությամբ սահմանված վարչական, քրեական եւ կարգապահական պատասխանատվություն է առաջանում, եթե՝

1) Հանձնաժողովն իր կայացրած որոշումը սույն օրենքով սահմանված դեպքում եւ կարգով չի հրապարակում,

2) Հանձաժողովը հրապարակում է ակնհայտ սուտ, կեղծ, չհիմնավորված, փոփոխված կամ խեղաթյուրված տեղեկատվություն,

3) տեղեկատվություն տիրապետողը խոչընդոտում է տեղեկատվության տրամադրումը Հանձնաժողովին,

4) Հանձաժողովին տրամադրվում է ակնհայտ սուտ, կեղծ, չհիմնավորված, փոփոխված կամ խեղաթյուրված տեղեկատվություն,

5) խոչընդոտվում է Հանձնաժողովի կայացրած եւ սահմանված կարգով ուժի մեջ մտած որոշման կատարումը կամ դրա կատարումն ապահովելու համար լիազորված պաշտոնատար անձը համապատասխան միջոցներ չի ձեռնարկում:

Հոդված 12. Անցումային դրույթներ եւ օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հինգերորդ գումարման Ազգային ժողովի համար Հանձնաժողովը ձեւավորվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-1088[1]-07.10.2016-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի փետրվարի 20-ի ՀՕ-308 օրենքի 97-րդ հոդվածում 1-ի մասից հետո լրացնել նոր 1.1. մաս հետեւյալ բովանդակությամբ.

«1.1. Նորընտիր Ազգային ժողովի առաջին նստաշրջանի բացման օրվան հաջորդող մեկ ամսվա ընթացքում հատուկ ծառայությունների հետ գաղտնի համագործակցած անձանց գործունեության բացահայտման, գնահատման, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պաշտոններ զբաղեցնելը կանխելու եւ սահմանափակելու (կամ գաղտնազերծելու) նպատակով «Գաղտնազերծման (Լյուստրացիայի) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով ստեղծվող միջգերատեսչական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կազմում Ազգային ժողովի նախագահի որոշմամբ հաստատվում են Ազգային ժողովի խմբակցությունների, պատգամավորական խմբերի եւ անկախ պատգամավորների կողմից առաջադրված արհեստավարժ մասնագետները:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցությունների, պատգամավորական խմբերի եւ անկախ պատգամավորների կողմից առաջադրվում են մեկական արհեստավարժ մասնագետ, ընդ որում՝ խորհրդարանական ընդդիմադիր խմբակցությունների կողմից ներկայացված երկուական ներկայացուցիչ:

Հանձնաժողովի՝ Ազգային ժողովի խմբակցությունների, պատգամավորական խմբերի եւ անկախ պատգամավորների կողմից առաջադրված անդամի հրաժարականի, հետկանչի կամ պաշտոնը թափուր մնալու դեպքերում նրան առաջադրելու իրավունք ունեցող Ազգային ժողովի խմբակցությունը, պատգամավորական խումբը կամ անկախ պատգամավորները մեկշաբաթյա ժամկետում Ազգային ժողովի նախագահին են ներկայացնում Հանձնաժողովի նոր անդամի թեկնածությունը: Ազգային ժողովի նախագահը մեկշաբաթյա ժամկետում փոփոխություն է կատարում Ազգային ժողովի նախագահի որոշման մեջ եւ դրա մասին հայտարարում է Ազգային ժողովի առաջիկա նիստում:

Հանձնաժողովը գործում է մինչեւ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի լիազորությունների ավարտը կամ արձակումը:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հինգերորդ գումարման Ազգային ժողովի համար Հանձնաժողովը ձեւավորվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-1088[2]-07.10.2016-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի փետրվարի 22-ի ՀՕ-126-Ն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր 13-րդ կետ հետեւյալ բովանդակությամբ.

«13) «Գաղտնազերծման (Լյուստրացիայի) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով կազմավորված գաղտնազերծման միջգերատեսչական հանձնաժողովի կազմում առաջադրում է մեկ արհեստավարժ մասնագետ:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-1088[3]-07.10.2016-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի ապրիլի 16-ի ՀՕ-177 օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետում լրացնել նոր «ե)» ենթակետ հետեւյալ բովանդակությամբ.

«ե) գաղտնազերծման միջգերատեսչական հանձնաժողովին՝ «Գաղտնազերծման (Լյուստրացիայի) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-1088[4]-07.10.2016-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ազգային անվտանգության մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի դեկտեմբերի 28-ի ՀՕ-294 օրենքի 16-րդ հոդվածում ժթ) ենթակետում «պահպանությունը» բառից հետո վերջակետը փոխարինել միջակետով եւ լրացնել նոր «ի)» ենթակետ հետեւյալ բովանդակությամբ.

«ի) օժանդակել գաղտնազերծման միջգերատեսչական հանձնաժողովին՝ «Գաղտնազերծման (Լյուստրացիայի) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-1088[5]-07.10.2016-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքում լրացնել նոր 302.1-րդ հոդված հետեւյալ բովանդակությամբ.

«Հոդված 302.1. «Գաղտնազերծման (Լյուստրացիայի) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) պահանջները չկատարելը

1. Օրենքի 6-րդ հոդվածով սահմանված գաղտնազերծման ենթակա պաշտոններ զբաղեցնող կամ դրանց հավակնող եւ 9-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետով բացահայտված անձանց կողմից զբաղեցրած պաշտոնից ինքնակամ (կամավոր) հրաժարվելու կամ դրան հավակնելուց հրաժարվելու առաջարկը մերժելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

2. Օրենքով սահմանված դեպքերում իր (այդ թվում՝ այլ անձանց) վերաբերյալ տեղեկատվությունը թաքցնելը կամ դիտավորյալ սուտ կամ կեղծ տեղեկատվություն հայտնելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով:

3. Օրենքով սահմանված կարգով գաղտնազերծման միջգերատեսչական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կայացրած որոշումը չկատարելը կամ դրա կատարմանը խոչընդոտելը, ինչպես նաեւ պատասխանատու պաշտոնատար անձի կողմից Հանձնաժողովի որոշման կատարման համար միջոցներ չձեռնարկելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից ութ տարի ժամկետով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-1088[6]-07.10.2016-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի դեկտեմբերի 3-ի ՀՕ-94 օրենքի 24-րդ հոդվածում լրացնել նոր երրորդ մաս հետեւյալ բովանդակությամբ.

««Գաղտնազերծման (լյուստրացիայի) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով կազմավորված գաղտնազերծման միջգերատեսչական հանձնաժողովի պետական եւ ծառայողական գաղտնիք կազմող տեղեկություններին ծանոթանալու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Գաղտնազերծման (Լյուստրացիայի) մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Ազգային անվտանգության մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» եւ «Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի ընդունման

«Գաղտնազերծման (Լյուստրացիայի) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի եւ հարակից մի շարք այլ օրենքների նախագծերի փաթեթի ընդունման նպատակներն են.

- մինչեւ 1991 թվականի սեպտեմբերի 21-ի Հայաստանի Հանրապետության անկախության հանրաքվեն նախկին ԽՍՀՄ Պետական անվտանգության կոմիտեի, հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կամ այլ երկրների հատուկ ծառայությունների հետ բացահայտ կամ գաղտնի հիմունքներով աշխատած կամ համագործակցած անձանց գաղտնազերծումը,

- ներկայումս Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանության, պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավար եւ այլ պաշտոններ զբաղեցնող անձանց գաղտնազերծումը, նրանց պաշտոնանկությունը, եթե վերջիններս նախկինում գաղտնի կամ բացահայտ համագործակցել են հատուկ ծառայությունների հետ, ինչպես նաեւ այդպիսի անցյալով անձանց ղեկավար եւ այլ պաշտոններ զբաղեցնելու հավակնությունների կանխումը,

- Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ոլորտը կարգավորող օրենսդրության հիմնարար դրույթների ու սկզբունքների իրականացումը պետության եւ հասարակության, մարդու եւ քաղաքացու իրավունքների, ազատությունների ու անձնական անվտանգության պաշտպանության նպատակով՝ ապահովելով նրանց պաշտպանվածությունը նախկին ԽՍՀՄ եւ օտարերկրյա հատուկ ծառայությունների հետ համագործակցած անձանցից, նրանց ներազդեցությունից, շանտաժից ու հավաքագրումից կամ անօրինական գործունեության մեջ ներգրավելուց կամ դրանց փորձերից,

- Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարական հասարակության եւ սահմանադրական կարգի ամրապնդումը, ազգային անվտանգության ապահովման կանխարգելիչ միջոցառումների իրականացումը,

- սահմանադրական կարգի հիմունքների ու պետության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների կանխումը,

- հանրության սահմանադրական իրավունքների եւ ազատությունների, պատվի ու բարի համբավի պաշտպանությունը,

- ինչպես նաեւ Խորհրդային, ֆաշիստական եւ այլ ամբողջատիրական գաղափարախոսության ու քարոզչության տարածման կանխումը:

Նախագծերի փաթեթը մշակելիս հաշվի են առնվել եւ վերլուծվել են սույն ոլորտում առկա միջազգային փորձը, մասնավորապես՝ Լիտվայի, Լեհաստանի, Վրաստանի, Չեխիայի, Սերբիայի, Գերմանիայի, Ռումինիայի, Ալբանիայի եւ Հունգարիայի օրենսդրությունները: Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ սահմանված չեն Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր եւ դատական իշխանության, պետական կառավարման ու տեղական

ինքնակառավարման մարմինների ղեկավար եւ այլ պաշտոններ զբաղեցնող անձանց գաղտնազերծման՝ լյուստրացիայի իրավական հիմքերը: Գործող օրենսդրությամբ ամրագրված չեն այնպիսի դրույթներ, ըստ որոնց՝ պետության եւ հասարակության, մարդու եւ քաղաքացու իրավունքների, ազատությունների ու անձնական անվտանգության պաշտպանության նպատակով, կապահովվի նրանց պաշտպանվածությունը նախկին ԽՍՀՄ եւ օտարերկրյա հատուկ ծառայությունների հետ համագործակցած անձանցից, նրանց ներազդեցությունից, շանտաժից ու հավաքագրումից կամ անօրինական գործունեության մեջ ներգրավելուց կամ դրանց փորձերից:

Սույն օրենքների նախագծերի փաթեթով առաջարկվում է իրավական սահմանում տալ լյուստրացիային՝ գաղտնազերծմանը, ամրագրելով այդ գործընթացի հաջորդականությունը: Գաղտնազերծման մասին օրենքով առաջարկվում է հատուկ ծառայությունների հետ գաղտնի համագործակցած անձանց գործունեության բացահայտման, գնահատման, ինչպես նաեւ վերջիններիս՝ օրենքով սահմանված պաշտոններ զբաղեցնելը կանխելու եւ սահմանափակելու (կամ գաղտնազերծելու) նպատակով Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր նորընտիր Ազգային ժողովի առաջին նստաշրջանի բացման օրվան հաջորդող մեկ ամսվա ընթացքում Կառավարության որոշմամբ ստեղծել միջգերատեսչական հանձնաժողով: Չորրորդ գումարման Ազգային ժողովի համար առաջարկվում է Հանձնաժողովը ձեւավորել օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում:

Հանձնաժողովում ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության Գլխավոր դատախազության, Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ծառայության, Հայաստանի Հանրապետության ոստիկանության, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի խմբակցությունների, պատգամավորական խմբերի եւ անկախ պատգամավորների կողմից առաջադրված՝ մեկական արհեստավարժ մասնագետ, ընդ որում՝ խորհրդարանական ընդդիմադիր խմբակցությունների կողմից ներկայացված երկուական ներկայացուցիչ: Հանձնաժողովն իր կազմից ընտրում է հանձնաժողովի նախագահ եւ քարտուղար, ընդ որում՝ նրանցից մեկը պետք է լինի ընդդիմության ներկայացրած անդամը:

Հանձնաժողովը հավաքագրում, ստուգում եւ վերլուծում է հատուկ ծառայությունների հետ գաղտնի համագործակցած անձանց տրամադրած փաստաթղթերը, նյութերը եւ նրանց նախկին գործունեության մասին տեղեկությունները, որոնք կարող են հրապարակվել սույն օրենքով սահմանված դեպքերում, վարում է հատուկ ծառայությունների հետ գաղտնի համագործակցած անձանց ռեեստր, ինչպես նաեւ հատուկ ծառայությունների հետ համագործակցության մեջ խոստովանած անձանց խնդրանքով միջոցներ է ձեռնարկում նրանց շանտաժի, հավաքագրման կամ անօրինական գործունեության մեջ ներգրավելու փորձերից պաշտպանության ուղղությամբ:

Գաղտնազերծման ենթակա պաշտոններ զբաղեցնող կամ դրանց հավակնող անձանց, ովքեր բացահայտվել կամ խոստովանել են հատուկ ծառայությունների հետ համագործակցության մասին, Հանձնաժողովն առաջարկում է ինքնակամ (կամավոր) հրաժարվել զբաղեցրած պաշտոնից կամ դրան հավակնելուց: Եթե նրանց կողմից մերժվում է այդ առաջարկությունը, Հանձնաժողովը հրապարակում է այդ անձանց վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաեւ տվյալ անձի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնում է համապատասխան մարմնին՝ պաշտոնանկության, թեկնածության գրանցումը չեղյալ ճանաչելու առաջարկով:

«Գաղտնազերծման (լյուստրացիայի) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը նաեւ սահմանում է Հանձնաժողովի կազմավորման, գործունեության, որոշումների ընդունման եւ դրանց բողոքարկման կարգերը, ինչպես նաեւ իրավունքներն ու պարտականությունները, սույն օրենքի պահանջների խախտման համար պատասխանատվությունը:

Օրենսդրական փաթեթի մաս կազմող «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում առաջարկվող լրացումը սահմանում է գաղտնազերծման միջգերատեսչական հանձնաժողովում Ազգային ժողովի խմբակցությունների, պատգամավորական խմբերի ու անկախ պատգամավորների կողմից նշանակվող անդամների առաջադրման կարգը: «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում

առաջարկվող լրացումը գլխավոր դատախազի լիազորություններում ավելացնում է այդ հանձնաժողովում անդամ առաջադրելու իրավասությունը:

«Ոստիկանության մասին» եւ «Ազգային անվտանգության մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում առաջարկվող լրացումները ոստիկանության եւ ազգային անվտանգության ծառայությունների պարտականությունների թվում ավելացնում են «Գաղտնազերծման (լյուստրացիայի) մասին» օրենքով սահմանված կարգով գաղտնազերծման միջգերատեսչական հանձնաժողովին աջակցելու պարտականությունը:

«Պետական եւ ծառայողական գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում առաջարկվող լրացմամբ գաղտնազերծման միջգերատեսչական հանձնաժողովի պետական եւ ծառայողական գաղտնիք կազմող տեղեկություններին ծանոթանալու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում առաջակվող լրացմամբ ավելացվում է նոր հոդված «Գաղտնազերծման (լյուստրացիայի) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները չկատարելու համար: